

Երգը՝ իղձի եւ հառաչի թել մըն է հիր՝
Որ կը հիւսուի անկիւններու մէջ արփաւոր
Ու կ'անհետի մըշուշին մէջ՝ որպէս սուզակ՝
Որ ընդերկար յաւետ չի՝ գար ա՛լ երեւան:

Սըրինգ մըն ալ այս առտըւան մէջ մանիշակ.
Սըրինգն է ան այծհորանի անդէորդին,
Որ մէգին մէջ կը ծագեցնէ երգ մը՝ արեւ
Ու ասմագուն ըմպած դաշտին տեսիլն ոգող:
Ու տրտմութիւնն այգուն՝ կ'իյնայ պահ մը զերթ քօղ.
Ու պարիկ մը քումայթ՝ հոգւոյն կու տայ բարեւ.
Ու ծառերու ծաղկանըկար սրահակն հեշտին
Ընդնշմարել կու տայ լիճին կոյսը խաժակ:

14. ԱՆԱՆՈՒՆ

Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսէ՛, մասուր ու կանանչէ
Ցանկապատին շուքին նստած
Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Ըսպիտակ, կաթ ու մազտաքէ
Բուրող ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսէ՛, քի՛չ մը գէթ չե՞ս դողար,
Յովիկն անոյշ երբոր փըջէ...

Յըպա՛րտ ծաղիկ, անունն ի՞նչ է
Պարիկին 1[1], որ անցաւ քովէդ,
Յեզուկ ու սեւ սաթի վետվետ
Ցայտք մը ձըգած իր քամակէն:

Գիտե՞ս, ծա՛ղիկ, անունն ի՞նչ է
Դողին՝ զոր քեզ տըւաւ հովիկ,
Ու ձայնին՝ որ գիս կը կանչէ...

15. ԻՐԻԿՆԱՅԻՆ

Յորիզոնէն վար՝ քայքայուած ու ցրուոն՝
Ոսկինարգէս շառայլի փունջ մը կ'իյնայ՝